Հայոց[1] Մուշեղ: *63* Սոյնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամենայն նախարարքն եւ մեծամեծքն եւ բովանդակ ամենայն զաւրքն եւ եղեւ մեծ յաղթութիւն յերկրին Հայոց, եւ ի մէջ զաւրացն Յունաց: *64* Նոյնպէս լցան բազում աւարաւ գանձուցն զինու եւ զարդու, ոսկւով եւ արծաթով եւ բազում կարասեաւ, ձիովք եւ ջորեաւք եւ ուղտաւք, զոր ինչ թափեցին. զի ոչ գոյր թիւ կամ չափ, այլ կարի բազում էր յոյժ:

65 Բայց ապա ամբաստան լինէին քսութեամբ առ մեծ թագաւորին Պապայ զզաւրավարէն Մուշեղի, եւ ասէին՝ թէ Գիտեա, արքայ, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ, եւ քեզ մահու սպասէ. զի զքո թշնամիսն համակ արձակէ. զի զբազումս բազում անգամ ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զթշնամիսն. զի զՈւռնայր արքայ արձակեալ, թոյլ ետ ապրել, ի բուռն արկեալ զհակառակորդս քո: *66* Եւ վասն այսր իրաց բազում անգամ լինէր գժտութիւն թագաւորին Պապայ ընդ զաւրավարին Մուշեղի. եւ բազում անգամ յանդիմանէր զնա վասն այսր իրաց: *67* Իսկ զաւրավարն Մուշեղ տայր պատասխանի թագաւորին Պապայ, եւ ասէր՝ եթէ Զիմ զընգերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունէին, նոքա իմ ընգերք չէին, այլ քո. եկեսցես՝ որպէս ես զիմսն սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, եւ ոչ ձգեմ, եւ մի՛ այլ ձգել լիցի: *68* Եթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ ի ձեռն երբեք այր թագաւոր՝ որպէս եկն բազում անգամ, ես ոչ սպանանեմ զայր թագաւոր՝ որ գամ[2] մի թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ:

69 Թագաւորն Պապ իբրեւ լսէր զբանս զայս, յարտասուս հարեալ, եւ յարուցեալ ի գահոյիցն՝ բուռն հարկանէր զՄուշեղէ, արկանէր զնովաւ գիրկս, եւ լայր ի վերայ պարանոցին Մուշեղի, եւ ասէ. Մահապարտ են այնոքիկ՝ որ իշխեն խաւսել չարութիւն զՄուշեղէ զառնէ քաջէ եւ զպատուականէ: *70* Զի այր՝ որ ազգաւ պատուական է իբրեւ զմեզ, եւ նախնիքն դորա իբրեւ զնախնիսն մեր, եւ թողեալ նախնեացն դորա զթագաւորութիւնն Ճենաց աշխարհին, եկեալք առ մեզ նախնիքն՝ ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք եւ մեռեալք են, եւ հայր սորա ի վերայ հաւրն իմոյ մեռաւ. եւ սա միամտութեամբ մինչեւ ի մահ վաստակեալ է, եւ բազում անգամ Աստուած ետ մեզ յաղթութիւն յաղաւթս եւ ի խնդրուած հաւր մերոյ սքանչելւոյն Ներսիսի, ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն. զիա՞րդ ասեն ցիս զայս բանս՝ եթէ Մուշեղ քեզ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախորհ է, զի յաւտար տեարսն վասն բարեկամութեան խնայեաց, զիա՞րդ դա ի բնակ տեարս ձեռն

1 *Օրինակ մի յաւելու՝* քաջն
2 *Օրինակ մի՝* անգամ